

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ»», «
ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔ» ԵՎ «
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ»
ՍՏՈՒԳԱՏԵՍՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ , 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ ցուցաբերել ակտիվ մասնակցություն Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսներին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ